ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1918 թ. օգոստոս – 1921 թ. փետրվար)

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՒԼՅԱՆ

Հայրենի, և ո՛չ միայն, պատմագիտական ուսումնասիրություններում, որոնք անդրադառնում են 1918–1921 թթ. տագնապալից իրադարձություններին, երբեմն հիշատակվում է Վրաստանի հայոց ազգային խորհուրդը[1]: Սակայն այդ տեղեկությունները մնում են խիստ անբավարար նրա մասին լիակատար պատկերացում կազմելու համար: Հետևաբար, օրինաչափորեն առաջ են գալիս չլուսաբանված մի շարք հարցեր: Մինչ օրս անպատասխան են մնացել Վրաստանի հայոց ազգային խորհրդի երևան գալու պատճառներն ու հիմքերը, կազմավորման սկզբունքները, գոյության ժամանակագրական շրջանակները, նաև նրա գործունեության ասպարեզը և այլն: Ժամանակի մամուլն ընթերցելիս ակնհայտ է դառնում, որ հիշյալ կառույցը հաղորդակից է եղել և արագ արձագանքել է բոլոր մեծ ու փոքր այն իրադարձություններին, որոնք պատահել են Վրաստանի հայ համայնքի կյանքում: Ուստի նրա համակարգված պատմությունը պետք է առաջ բերի ու բացահայտի յուրահատուկ ուրվագիծ, որի միջոցով և հնարավորինս լայն չափով կհաջողվի, ըստ էության, գիտական ասպարեզ հանել, մեկնաբանել ու վերծանել Վրաստանի հայության կյանքի և կացության այն կողմերն ու իրադարձությունները, որոնք առայժմ մութ են մնացել և, հետևաբար, դեռ չեն գտել իրենց պատշաճ տեղը հայրենի պատմագիտության էջերում:

1917 թ. փետրվարյան իրադարձություններից հետո կյանքի էր կոչվում այն ամենը, ինչ այնքան ոգևորությամբ փառաբանվել էր փողոցներում ու հրապարակներում ազատության դրոշի տակ: Հոկտեմբերյան հեղաշրջումը նոր ընթացք տվեց զարգացող դեպքերին, կտրականապես փոխեց քաղաքական իրադրությունը նախկին Ռուսական կայսրության ողջ տարածքում: Կովկասում ազգային-տարածքային լուրջ վեճերի ու քաղաքական տարամերժ դիրքորոշումների հետևանքով տիրում էր փոխադարձ անվստահություն և թշնամանք: 1918 թ. մայիսի 26-ին խաթարվեց Այսրկովկասի երերուն միասնականությունը: Այդ օրը հռչակվեց վրացական անկախ պետականության վերականգնումը (Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն / ՎԴՀ): Նրա հիմնադիր այրերից ամենակարկառուն դեմքը՝ վրացի սոցիալ-դեմոկրատների առաջնորդ Ն. Ն. Ժորդանիան խոստանում էր, որ «մեր ազգային փոքրամասնությունները կլինեն նույնքան

[1] *Ժամանակի մամուլի նյութերում և այլ վավերագրերում կարելի է հանդիպել նաև «Վիրահայ ազգային խորհուրդ» տարբերակը:*

իրավազոր, ինչպես մեր պետության ազգային մեծամասնությունը՝ վրաց ժողովուրդը»[2]: Հայալեզու մամուլի էջերում, այս շռայլորեն տարածվող խոստումները, սակայն, արժանացան աչալուրջ վերաբերմունքի և խոհեմաբար պնդվեց, որ մինչև Վրաստանի հայությունը «չկազմակերպվի և կանոնավոր ու իրավասու մարմինների միջոցով իրավունքների պաշտպանելու և իրագործելու խնդիրն առաջ չտանի, այդ իրավունքները լոկ դատարկ խոսքեր կլինեն»[3]:

1918 թ. հունիսի 15-ին Թիֆլիսում գումարված ՀՅԴ-ի տեղի անդրանիկ «ռայոնական ժողովի» մասնակիցներն առաջ էին քաշում Վրաստանի հայ համայնքի մշակութային և դպրոցական կարիքները ինքնավար հոգալու անհրաժեշտության գաղափարը: Քննության առնելով վրաց պետության սահմաններում ապրող հայության ստվար զանգվածի վիճակը, ժողովը միասնաբար անհրաժեշտ գտավ ամենակարճ ժամանակամիջոցում ստեղծել Հայոց ազգային խորհուրդ: Նա «իր վրա պիտի վերցնի հիմնավորելու և կյանքի մեջ իրականացնելու Հայոց Ազգային կուլտուրական ավտոնոմիան Վրաստանի սահմաններում»[4],– ասվում էր ժողովի բանաձևում:

Ինչպես հայտնի է, Թիֆլիսում մինչ այդ գործող Հայոց ազգային խորհուրդը (որի նախագահն Ավ. Ահարոնյանն էր) 1918 թ. հուլիսի 17-ին Վրաստանի տարածքից փոխադրվեց նորակազմ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: Առաջ եկած քաղաքական անբարենպաստ պայմաններում, անհետաձգելի պահանջ և խնդիր դարձավ նախորդ մարմնի փոխարեն անհապաղ վերաստեղծել ազգային մի այլ ղեկավար կառույց, որի բացակայությունը գրեթե անմիջապես զգացնել տվեց իրեն, Վրաստանի ողջ հայության համար: Նոր Հայոց ազգային խորհրդը (այսուհետև՝ ՀԱԽ) առաջացավ հայկական երկու կուսակցությունների և քաղաքական այլ հոսանքների փոխադարձ համաձայնությամբ: Նրա կազմավորման ակունքների մոտ կանգնած էին և հիմնադիր անդամներ դարձան քաղաքական և հասարակական այնպիսի գործիչներ, այդ թվում նաև անվանի ու ականավոր, ինչպես Մ. Պապաջանյանը[5], Ս. Ս. Հարությունյանը[6], Գ. Պ. Մելիք-Ղարագեոզյանը[7], Ա. Բարխուդարյանը՝ Հայ Ժողովրդական կուսակցությունից, Ն. Պ. Աղբալյանը[8], Հ. Գ. Արղությանը[9], Գ. Ա.

---

[2] *Տե՛ս «სახალხო საქმე» («Համաժողովրդական գործ»),* 28. V. 1918.

[3] *Տե՛ս Վրաստանի հայության կազմակերպումը. – «Հորիզոն» (Թիֆլիս),* 9. VI. 1918:

[4] *Տե՛ս Ներքին տեսություն. Հայ Յեղ. դաշնակցություն. – «Հորիզոն»,* 30. VI.1918:

[5] *Հայ Ժողովրդական Կուսակցության (ՀԺԿ) հիմնադիր առաջնորդ, նրա Կենտրոնական կոմիտեի նախագահ:*

[6] *ՀԺԿ-ի կենտկոմի փոխնախագահ, ՀՀ-ի արդարադատության նախարար Հ. Քաջազնունու ղեկավարած երկրորդ կառավարության կազմում:*

[7] *ՀՀ-ի լուսավորության նախարար Հ. Քաջազնունու ղեկավարած երկրորդ կառավարության կազմում:*

[8] *ՀՅԴ-ի ականավոր գործիչ, գրականագետ, մանկավարժ, ՀՀ-ի լուսավորության նախարար:*

[9] *Նաև՝ Խանասորի Իշխան, ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ: Հ.Գ. Արղությանի կենսագրությանը նվիրված բաժնում (տե՛ս Ով ով է. Հայեր. Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 166), նա սխալմամբ հիշատակվում է նաև որպես Վիրահայ ազգային խորհրդի նախագահ: Իրականում, լինելով նրա գործադիր մարմնի անդամ, երբեմն վարում էր այդ կառույցի նիստերը:*

Տեր-Ստեփանյանը[10], Դ. Գ. Դավիթխանյանը՝ Հ. Յ. Դաշնակցությունից, Լ. Գ. Թումանյանը[11], Ա. Ստամբոլցյանը, Վ. Թուրազյանը՝ սոցիալիստ հեղափոխականներից, Ա. Հ. Երզնկյանը[12], Գ. Հ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ), Ս. Դանդուրյանը, Մ. Ղարաբեկյանը՝ սոցիալ-դեմոկրատներից: Նրանք համաձայնության եկան, որ ՀԱԽ-ի սույն աշխատակազմը կգործի օգոստոսից մինչև նույն թվականի սեպտեմբերը, երբ նախատեսվում էր գումարել Վրաստանի ողջ հայության համագումարը[13]: Ըստ երևույթին, սա էր այն հիմնական փաստարկը, որ ՀԱԽ-ը որոշեց մերժել հնչակյանների և Հայրենակցական միությունների միության առաջարկը՝ իրենց ևս տեղեր հատկացնելու մասին[14]: Սակայն, տարբեր պատճառներով, ՀԱԽ-ի առաջին կազմը հիմնովին վերափոխվեց և այն, հետագայում, մի քանի անգամ ևս փոփոխություններ կրեց և՛ անհատական, և՛ քանակական առումներով: ՀԱԽ-ի գոյության տարբեր փուլերում նրա գործունեությանը մասնակից եղան նաև ականավոր հայ գիտնականներ Ե. Գ. Տեր-Մինասյանը, Ս. Ս. Մալխասյանցը, Ա. Գ. Բաբախանյանը (Լեռ), Ա. Գ. Աբեղյանը, Ղ. Գ. Տեր-Ղազարյանը[15], Վ. Հ. Ռշտունին:

Վրաստանի նորակազմ ՀԱԽ-ի 1918 թ. օգոստոսի 2-ի առաջին իսկ նիստը նվիրված էր դպրոցական խնդրին[16]: Հաջորդ՝ օգոստոսի 6-ի նիստում որոշվեց ՀԱԽ-ի անդամների թիվը կրկնապատկել «պարիտետի» հիման վրա: Յուրաքանչյուր կուսակցությունից նրա մեջ մտան 8-ական հոգի[17]: Այսպիսով, խորհուրդը պետք է կազմված լիներ 32 անդամից: ՀԱԽ-ի գործկոմի ընտրության ժամանակ մի կողմից ՀՅԴ-ի, մյուս կողմից սոցիալիստների (էսդեկներ և էսէռներ) հակասությունները ստացան այնպիսի կերպարանք, որ կարող էին խորհրդի տարաժամ վիժման առիթ ներկայանալ[18]: Կուսակցությունները գրեթե առաջին իսկ օրից սկսեցին նիզակներ ճոճել միմյանց դեմ, ինչը մեծապես խանգարում և խոչընդոտում էր հետագա ստեղծարար աշխատանքին:

ՀԱԽ-ի գոյության փաստը դեռ չէր նշանակում նրա իրավական ճանաչումը: Այդ բացը պատճառաբանվում էր հանրապետական սահմանադրության բացակայությամբ, որը և պետք է որոշեր վրաց պետության ու ազգային փոքրամասնությունների տարբեր տեսակի ներկայացուցչական մարմինների փոխադարձ լիազորությունները: Հետևապես, վրացի պաշտոնյաների քմահաճույքին էր մնում՝ փոխհարաբերություններ ունենալ

---

[10] *Վրաստանի Սահմանադիր ժողովի պատգամավոր (1919-1921):*

[11] *Անդրկովկասյան Սեյմի (1918), Վրաստանի Պառլամենտի (1918-1919) և ՀՀ-ի խորհրդարանի անդամ (1919-1920):*

[12] *Անդրկովկասյան Սեյմի և կառավարության անդամ (1918):*

[13] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ.– «Մշակ» (Թիֆլիս), 3. VIII. 1918:*

[14] *Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի նիստը.– «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 17. IX. 1918: Բացասական վերաբերմունքի արժանացավ նաև հայ «կադետների» հայցը, ինչը կասկած է հարուցում, թե առաջ ընկած սոցիալիստական գործիչները, շահարկելով ՀԱԽ-ի վերընտրության սկզբունքը, փորձում էին փոքրիշատե երկարաձգել իրենց գերակայությունն այդ կառույցում (տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 19. X. 1918:*

[15] *Անդրկովկասյան կոմիսարիատի անդամ (1917-1918):*

[16] *Տե՛ս «Հորիզոն», 4. VIII. 1918:*

[17] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Մշակ», 8. VIII. 1918:*

[18] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 1. IX. 1918:*

ՀԱԽ-ի հետ, թե անպատասխան թողնել նրա բոլոր դիմումները: Իրավիճակը մի փոքր շտկվեց, երբ 1918 թ. սեպտեմբերի 16-ին Վրաստանի վարչապետ Ն. Ն. Ժորդանիան ոչ պաշտոնապես ճանաչեց ՀԱԽ-ը: Ողջունելով իր մոտ այցելած հայ համայնքի լիազորներին՝ կառավարության նախագահը մասնավորապես վստահեցրեց, որ այսուհետև վարչական մարմիններն այլևս չեն անտեսի ՀԱԽ-ը[19]: Հետագայում, սակայն, նրա անդամները արձանագրեցին, որ □այդ առումով Հայոց Ազգային Խորհուրդը հանդուրժելի է լոկ տարբեր տեսակի մասնավոր հարցերի վերաբերյալ բարեխոսություններ կատարելու համար, միջնորդություններ, որոնք ոչ մեկի վրա ոչ մի պարտավորություն չեն դնում»[20]:

1918 թ. օգոստոսին Վրաստանի ազգային խորհուրդը (այսուհետև՝ ՎԱԽ), որը ճանաչվեց որպես ժամանակավոր բարձրագույն օրենսդիր մարմին, որոշում կայացրեց իր կազմում ընդգրկել նաև Վրաստանի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, մասնավորապես հայերին հատկացնելով պատգամավորական 10 տեղ[21]: Խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչության մասին օրենքն ընտրության իրավունք էր տալիս ազգային սոսկ այն խորհուրդներին, որոնք բաղկացած էին Վրաստանի քաղաքացիներից[22] և որոնց գործունեությունը սահմանափակվում էր հանրապետության շրջանակներով[23]: Գրեթե մեկ ամիս պահանջվեց, որ ՀԱԽ-ը կազմող կուսակցությունների միջև որոշակի փոխհամաձայնություն ձևավորվեր վրաց խորհրդարան գործուղվող անհատների մասին: ՎԱԽ-ում աշխատանքի համար լիազորվեցին Վրաստանի ՀԱԽ-ի անդամները՝ սոցիալ-դեմոկրատներ՝ Ա. Երզնկյան, Ս. Փիրումյան, Ա. Իվանյան, դաշնակցականներ՝ Զ. Ն. Զորյան[24], Դ. Դավիթխանյան, Տ. Ավետիսյան, սոցիալիստ հեղափոխականներ՝ Լ. Թումանյան, Ն. Թարխանյան և ՀԺԿ-ի ներկայացուցիչներ Պ. Դոլուխանյանն ու Ա. Բարխուդարյանը[25]: 1918

---

[19] *Տե՛ս Քրոնիկոն. – «Ժողովրդի ձայն»,* 17. IX. 1918:

[20] *Տե՛ս* «MEMORANDUM», Учредительному собранию о национальном самоуправлении армян в Грузии. Тифлис, 1921, с. 25–26.

[21] *Տե՛ս* Хроника: Национальные меньшинства. – Кавказское слово *(ВЗэЙЗл), 27. VIII. 1918.*

[22] *Պետք է փաստել, որ վրաց խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը սահմանվել էր «անկախության մասին ակտով»: ՎԱԽ-ը, սակայն, դիտավորյալ հապաղում էր այդ իրավունքը գործնականում իրականացնող քայլերից, մինչև որ 1918 թ. հուլիսի 16-ին չհաստատեց «Վրաստանի դեմոկրատական հանրապետության հպատակության մասին կանոնադրություն»-ը: Ըստ որի՝ բացի էթնիկական վրացիներից քաղաքացի էին ճանաչվում նաև այն անձինք, ովքեր իբրև ավանդական խավերի (իմա՝ ազնվական, քաղքենի, գյուղացի) ներկայացուցիչներ գրանցված են եղել Վրաստանի մաս կազմող վարչական որևէ օղակին կից մինչև 1914 թ. հուլիսի 19-ը (օգոստոսի 1-ը): Այս «կանոնադրության» համաձայն քաղաքացիության ձեռք բերման որևէ եղանակ չէր նախատեսված (տե՛ս Հպատակության օրենքը Վրաստանում.– «Հառաջ» (Թիֆլիս), 11. I. 1919): Փաստորեն, այդ օրենքի գլխավոր նպատակն էր հնարավորինս խոչընդոտել և դժվարացնել Վրաստանում մինչև 1918 թ. մայիսի 26-ը մշտական բնակություն հաստատած ոչ վրացի ազգությունների ներկայացուցիչներին իբրև նորակազմ հանրապետության իրավազոր ու լիիրավ քաղաքացիների ճանաչումը:*

[23] *Վրաստանի պառլամենտ. – «Մշակ», 31. X. 1918:*

[24] *Լինելով Ախալցխայի քաղաքագլուխ՝ Զ. Զորյանը հմտորեն կազմակերպել էր քաղաքի ինքնապաշտպանությունը (1917-1918):*

[25] *Տե՛ս «Հորիզոն», 27. IX. 1918: Վրաստանի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցչության կարևոր հարցին, անշուշտ, անդրադարձ եղավ նաև ՀՅԴ-ի կուսակցական մամուլում: Այսպես, կարծիք հնչեց, որ «…մեր ներկայացուցիչները միշտ պիտի… հեռու լինելով անպատասխանատու օպոզիցիայի դերից, պիտի գործակցեն բոլոր այն տարրերի հետ, որոնք իրենց հերթին հեռու լինելով նեղ ազգայնական քաղաքականությունից, անվերապահ կերպով պաշտպանում են Վրաստանի դեմոկրատիայի շահերը…»: Տե՛ս «Աշխատավոր» (Թիֆլիս), 24. IX. 1918: Այս միտքը հավելում է, մեր կարծիքով, մեկ այլ պարբերություն, որը խնդրո առարկան ավելի շեշտված է բացահայտում. «…Մենք մեր պատգամավորներին ուղարկելով Վրաստանի պառլամենտ՝ հրահանգում ենք… գործոն մասնակցությամբ շինարար աշխատանք կատարել իբրև հավասար, ազատ ու հարազատ քաղաքացիներ ուժեղ վրացական դեմոկրատական հանրապետություն ստեղծելու համար…» (տե՛ս «Աշխատավոր», 29. IX. 1918):*

թ. հոկտեմբերի 1-ին նրանք ներկայացան խորհրդարան և ճանաչվեցին որպես նրա իրավազոր անդամներ: Գործընկերների անունից ՎԱԽ-ի այլ պատգամավորներին ողջունեց Դ. Դավիթխանյանը, որն ի միջի այլոց ասաց. «Մենք Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչներն ենք, բայց եկել ենք այստեղ ոչ թե միայն մեր ազգային-կուլտուրական շահերը պաշտպանելու, այլև Ձեզ հետ միասին լծվելու և մեր փոքրիկ ազատ հայրենիքի – Վրաստանի բարօրության համար աշխատելու»[26]: Խորհրդարանի բարձր ամբիոնից հնչած այս խոստովանությունը դահլիճի կողմից դիմավորվեց որոտալից ծափահարություններով: Վրաց կուսակցական մամուլը նույնպես ջերմորեն ողջունեց հայ պատգամավորներին[27]: Վերջիններիս առջև, սակայն, դրվել էին մի շարք անպաշտոն սահմանափակումներ: Այդպես, օրինակ, արգելվել էր նրանց մասնակցությունը խորհրդարանի տարբեր տեսակի հանձնաժողովներում[28]: Հայ համայնքի լիազորները չպահպանեցին կազմակերպչական միասնականությունը վրաց խորհրդարանում. ՀՅԴ-ի ներկայացուցիչները հանդես եկան առանձին պատգամավորական խմբի ստեղծման նախաձեռնությամբ[29]:

Հայ համայնքի ներկայացուցչությունից խորհրդարանում պահանջվում էր գործի դնել իր ամբողջ ներուժը, որպեսզի բեկում մտցներ այն խնդիրների մտահոգիչ և անբարենպաստ խմորումների մեջ, որոնք արդեն թանձրացել էին Վրաստանի սահմաններում բնակվող կամ իրադարձությունների բերումով հայտնված հայերի գլխին: Առաջին հերթին դա վերաբերում էր գաղթականությանն օգնելու հարցին: 1918 թ. հունիսի սկզբին Ջավախքի հայ բնակչությունը՝ շուրջ 80-90 հազ. մարդ, փրկություն փնտրելով թուրքական յաթաղանից, գաղթեց դեպի Բակուրիան և Ծալկա[30]: Վրացական կառավարությունը թույլ չտվեց ջավախահայ

---

[26] *Տե՛ս Վրաց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 5. X. 1918:*

[27] *Տե՛ս* «საქართველო» *(«Սաքարթվելո»), 4. X. 1918. Նաև՝* «შრომა» *(«Աշխատանք»), 4. X. 1918.*

[28] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 19:*

[29] *Տե՛ս «Աշխատավոր»,* 18. X. 1918:

[30] *1917-ի դեկտեմբերից 1918-ի հունիսն ընկած ժամանակամիջոցում Ջավախքի հայությունը ինքնապաշտպանական կռիվներ էր մղում ինչպես Օսմանյան Թուրքիայի, այնպես էլ նրա փոքր եղբայրների՝ տեղական թուրք-թաթարների դեմ (մանրամասն տե՛ս Ա. Ս. Ս ա ն ո ս յ ա ն. Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992): Վրաց քաղաքական վերնախավը, որը Ջավախքի նկատմամբ մեծ հավակնություններ ուներ և այն վերածնված Վրաստանի անբաժանելի մասն էր համարում գործնական ոչ մի օգնություն ցույց չտվեց գավառի պաշտպաններին և, կարծես, ընդառաջ էր գնում օսման նվաճողների ծրագրերին: Վրացի գործիչները փորձում էին իրենց «ազգային գործերը» կարգավորել հայերի հաշվին: Ինչպես հայտնի է, 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքվեց վրաց-թուրքական պայմանագիրը, համաձայն որի, Ախալքալաքի գավառը, նույնպես անցավ Թուրքիայի ձեռքը: Գերմանական կողմը, սակայն, չէր ճանաչում Բաթումի տխրահռչակ «հաշտությունը», քանզի Օսմանյան կայսրությունը նվաճեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրով չնախատեսված մարզեր: Գերմանիան խանդով էր նայում, թե ինչպես Բաթումում Թուրքիան ձեռք բերեց միակողմանի առավելություններ և պնդեց, որ հրավիրվի մի նոր կոնֆերանս: Նախատեսվում էր, որ Կ. Պոլսում այժմ պիտի բանակցեին Քառյակ միության և կովկասյան նորակազմ հանրապետությունների ներկայացուցիչները: Ենթադրվում էր, որ մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը մնալու էր առկախ: Այսպիսով, վրաց առաջնորդները, որոնք վայելում էին Գերմանիայի բազմակողմանի հովանավորությունը, Ջավախքի հարցի լուծումն ապագայում ևս տեսնում էին հօգուտ Վրաստանի: Իսկ մինչ այդ, կարծես, նրանց շահերից էր բխում Ախալքալաքի գավառի հայաթափումը, քանզի վրաց քաղաքական գործիչները գրեթե բոլոր առաջացած հարցերը վերլուծում էին տարածքային վեճի տեսակետից: «Մի պարզ ու որոշակի քաղաքականություն է վարում վրաց կառավարությունը դեպի հայկական տարրը Ախալքալաքի, Ախալցխայի շրջաններում: Նա ձգտում է սահմանների վեճի լուծումը այս կամ այն միջոցով՝ ամեն տեսակի խոչընդոտներ ու արգելառիթներ ստեղծելով գաղթականությանը այնպիսի վիճակի մեջ դնել, որ ոչ մի գաղթական կենդանի չմնա, ու այդպիսով խնդիրը լուծված կլինի…»,– եզրահանգում էր ժամանակի մամուլը (տե՛ս Վրաստանի Միջագետքը. – «Աշխատավոր»,* 2. XI. 1918):

գաղթականությանը տարածվելու դեպի իր երկրի խորքերը: Նրանց տեղաշարժը սահմանափակվեց հատուկ արգելագծով[31]:

Ինչպես հայտնի է, վրացական կառավարության հայտարարության համաձայն, Թիֆլիսի ամբողջ նահանգը, և, բնականաբար, Ախալքալաքի գավառը, Վրաստանի անբաժան մասն էր: Հետևաբար, այդ գավառի բնակիչները պիտի համարվեին Վրաստանի Հանրապետության քաղաքացիներ: Վրաստանում Հայաստանի հավատարմատար Արշակ Ջամալյանը արդարացի նշում էր, որ «Ախալքալաքի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին վրաց հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»[32]: Այսպիսով, վրաց կառավարությունը հրաժարվեց որևէ աջակցություն ցույց տալ հայ գաղթականներին[33]:

---

[31] *Վրաց արմատական ազգայնականների շաբաթաթերթը, էլ ավելի սաստկացնելով հասարակությունում օր օրի թանձրացող տագնապալից տրամադրությունները, պնդում էր՝ «եթե մեր կառավարությունը թույլ տա փախստականներին իրանց համակենտրոնացման բանակատեղիները թողնել ու տեղավորվել գյուղերում – Վրաստանն այսօր կամ վաղը Հայաստան կհայտարարվի» («ՅԼՋՅ» («Ժայռ») (1918, -5) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կյանք. – «Հորիզոն», 25. X. 1918): «Թերևս ավելի մեծ պատուհաս են դառել,– գրում էր ժամանակի մամուլը, – խեղճ գաղթականների գլխին տեղումս եղած քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները և մանավանդ դրանց ստորադրյալ հասարակ ծառայողները: Հանրապետության կառավարությունը որոշ նպատակով արգելել է գաղթականներին Վրաստանի ներսն անցնելը: Առանց* пропускъ- *ի ոչ որի թույլ չի տրվում երկաթուղի նստելու: Այդ բանն սկսեց ծառայել որոշ մարդկանց համար որպես հեշտ հարստանալու միջոց և եկամտի խոշոր աղբյուր: Հայտնի է, որ գաղթականության տենչանքն է Թիֆլիս և Հյուսիսային Կովկաս անցնելը: Եվ ով միջոց է ունեցել՝ արդեն գնացել է: Քաղաքի (իմա՛ Ախալքալաք – Բ. Մ.] 6 հազար բնակիչներից մնացել են մոտ 300 հոգի, իհարկե բոլորն էլ աղքատ և թշվառ: Գնացել, հեռացել են այստեղից և հարուստ գյուղացիներից շատերը□ (տե՛ս Խ. Գ յ ո ւ զ ա լ յ ա ն. Գաղթականության վիճակը. – «Հորիզոն», 10. VII. 1918): Այսպիսով՝ կաշառք բաժանելով գաղթականության այս ուններ և ճարպիկ մասը կարողացավ դեպի Թիֆլիս անցնել: Զանազան արգելքներ հաղթահարած հայ փախստականներին, որոնք հասել էին Վրաստանի մայրաքաղաք, Նավթլուղ կայարանում, սակայն, ձերբակալում էին և բռնությամբ վերադարձնում Բակուրիանի անտառներում գտնվող մյուս գաղթականների մոտ: Վարչապետ Ն. Ժորդանիայի կարգադրությամբ թույլատրվեց արգելափակող գծից դուրս փոխադրել միայն 305 որբ երեխաներ (տե՛ս Նամակներ խմբագրության.– «Հորիզոն», 25. VII. 1918): Այդուհանդերձ, պետք է նկատել նաև, որ Ջավախքի հայ գաղթականության գերակշիռ մասը սահմանագլխին պահում էր ո՛չ այնքան վրաց իշխանությունների անկատար և անկանոն վարչական վերահսկումը, որքան հարազատ տներն օր առաջ վերադառնալու հույսը և տենչանքը:*

[32] *Ա. Ջ ա մ ա լ յ ա ն. Հայ-վրացական կնճիռը. – «Հայրենիք» (Բոստոն), 1928, ապրիլ, էջ 90:*

[33] *1918 թ. հուլիսի 2-ին Վրաստանի ՆԳՆ-ի կից ստեղծվել էր Մեսխեթիայից և Ջավախքից եկած փախստականների գործերով զբաղվող «կոմիտե»: Հատկացնելով այդ կառույցին 185 հազ. ռուբլի նպաստ, վրաց կառավարությունն այդպիսով իր մարդասիրական առաքելությունն ավարտված համարեց և մի կողմ քաշվեց (տե՛ս* Ш. В а д а ч к о р и я. Вопросы грузино-армянских взаимоотношений в политической мысли Грузии (1918–1920). Тбилиси, 1999, с. 87, 90): *Ըստ այդմ, որոշվեց «հայտարարել [Թիֆլիսի] քաղաքային ինքնավարությանը և հայոց ազգային խորհրդին, որ կառավարությունն այլևս ի զորու չէ միջոցներ հատկացնել քաղաքային ինքնավարությանը, գաղթականների ֆինանսական օգնության համար և առաջարկում է դիմել տարբեր տեսակի բարեգործական հիմնարկների և ուններ մարդկանց» [տե՛ս «ЭРТОՊՆ» («Միասնություն»), 11. VII. 1918]: Գաղթականների ընդհանուր թվաքանակը Վրաստանում 1918թ. օգոստոսին կազմեց 150 հազ. մարդ (տե՛ս «Հորիզոն», 11. X. 1918): Այդ թվում 120 հազ. հայ, 15 հազ. հույն և 11 հազ. վրացի փախստական: Ինչ վերաբերում է Ադրբեջանից գաղթած 7-8 հազար հայ փախստականներին, ապա վրաց իշխանությունները նրանց մեծ մասը բռնի դուրս էին հանել սահման հանդիսացող Ալազան գետի մյուս ափը՝ հազարավոր անմեղ և անօգնական մարդկանց դարձնելով արյունարբու թուրք խուժանի կոտորածների առարկա (տե՛ս* Бакинская газета «Наше время» о погромах Нухинских, Арешских и Геогчайских армян в 1918 г. (сост. А. А. Закарян, А. И. Шахназарян).– *ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, -9, էջ 83–84, նաև՝ Նուխու և Արեշի գաղթականների վիճակը. – «Աշխատավոր», 11. IX. 1918): Ջավախքի գաղթականության ողբերգական պատմությունն ամբողջացվել և սպառիչ մեկնաբանության է արժանացել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ա. Մելքոնյանի հեղինակած համապարփակ ուսումնասիրության մեջ (տե՛ս Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003), ինչպես նաև Շ. Ա. Թորոսյանի արժեքավոր հոդվածում [տե՛ս Շ. Թ ո ր ո ս յ ա ն. Հայ-վրացական հարաբերությունների պատմությունից (ախալքալաքցիների գաղթը 1918 թվականին).– «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, -1, էջ 141–147: Այս դեպքերին արձագանքել է նաև ռուս հայտնի բանաստեղծ, հրապարակախոս*

1918 թ. ծանր պայմաններում, երկար վիճաբանություններից հետո, ՀԱԽ-ի անդամները, ի վերջո, համաձայնեցին վերցնել իրենց ուսերի վրա հայ գաղթականների օգնության և խնամատարության հոգսը[34]: Սեպտեմբերին, Ա. Ջամալյանի գիտությամբ, ՀԱԽ-ը որոշեց իրեն ենթարկել մինչ այդ գործող Գլխավոր գաղթականական խորհուրդը: Սույն կառույցը ստացավ ՀԱԽ-ի գործկոմին ենթակա բաժանմունքի կարգավիճակ[35]: Սակայն շուտով այդ հաստատության ղեկավարը՝ Հ. Գ. Արղությանը, ստիպված էր խոստովանել, որ նրան հատկացված «միջոցները խիստ սահմանափակ են և սպառվելու վրա»[36]: Ըստ նրա զեկույցի, «գաղթականների միայն 50 տոկոսին օրական մեկ ու կես ֆ[ունտ] հացով օգնելու համար հարկավոր է ամսական 4 միլիոն ռուբլի»[37]: ՀԱԽ-ը վրաց կառավարությանը դիմումներ է արել հայ գաղթականների կացությունը թեթևացնելու համար[38]: Սակայն գործնական որևէ նշանակություն և հետևանքներ այդ հայցերը չունեցան:

ՀԱԽ-ը չկարողացավ (ստեղծված պայմաններում չէր էլ կարող) հանդես գալ գաղթականական գործի համակարգողի դերում: Բարեգործական այն մեթոդները, որոնք կիրառում էին ՀԱԽ-ը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը և պաստ հատկացնող սակավաթիվ այլ կազմակերպությունները, խիստ անբավարար և տկար գտնվեցին, փրկվեց

ու հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին՝ «Կենդանի գերեզմանոց» հոդվածով [մանրամասն տե՛ս А н. З а к а р я н. Русские литераторы и армянская действительность (10-е гг. XX в.), Ереван, 1994, с. 158–161].

[34] *Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի նիստը. – «Ժողովրդի ձայն», 17. IX. 1918:*

[35] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 25. IX. 1918: Նաև՝ Գաղթականական բաժնում. – տե՛ս «Ժողովրդի ձայն», 27. XI. 1918:*

[36] *Տե՛ս Խորհրդակցություն հայ որբերի պահպանության հարցի մասին. – «Ժողովրդի ձայն», 5. X. 1918:*

[37] *Տե՛ս Թիֆլիսի հասարակության ներկայացուցիչների ժողովը. – «Ժողովրդի ձայն», 8. XI. 1918:*

[38] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 8, թ. 76-77 շրջ.:*

փախստականների մի որոշ մասը միայն: Այսպիսով, պետք է փաստել, որ ՀԱԽ-ի համար տասնյակ հազարավոր գաղթականների հոգալու գործը եղավ իր համեստ ուժերից և հնարավորություններից շատ ավելի վեր: Գաղթականների հսկայական ալիքը, որը ողողել էր Բակուրիանի անտառները, Ծալկայի բարձունքները և նույնիսկ Թիֆլիսի փողոցները[39], պահանջում էր պետական հանգուցալուծում: Վերջինիս բացակայության պարագայում այլ տեսակի միջոցառումները, մեղմ ասած, իրական չէին: Այդպես էլ չհաջողվեց հիմնովին և լիակատար կարգավորել գաղթականության սննդի մատակարարման ու բժշկասանիտարական սպասարկման խնդիրները, ինչը նրանց միջավայրում զանգվածային մահվածության պատճառը դարձավ: 1918 թ. հունիսից նոյեմբեր Բակուրիանի անտառներում սովից և համաճարակներից զոհվեց ավելի քան 18 հազար մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի շրջանում ապաստանած հայ գաղթականները[40]:

Այս աղետը, անշուշտ, ոչ միայն ընդհանուր ձախորդ քաղաքական պայմանների հետևանքն էր, այլ նաև ուներ որոշակի հեղինակներ ու հասցեատերեր: ՀՅԴ-ի Թիֆլիսի մամուլը ամբողջ մեղքը բարդեց վրաց իշխանությունների վրա: Վերջիններս իրենց պատվի համար վերին աստիճանի վիրավորական համարեցին այդ մեղադրանքները և, հետևաբար, մերժողական դիրք բռնեցին[41]: Վրաստանի խորհրդարանում 1918 թ. նոյեմբերի 8-ին այս հարցին նվիրված բուռն քննարկում տեղի ունեցավ[42]: Վրացազգի պատգամավորները, կուսակցական պատկանելությունից զատ, նախանձելի միասնականություն դրսևորեցին և նախահարձակ եղան, ինչը չի կարելի ասել հայ համայնքի լիազորների մասին: Ախալքալաքի Հայրենյաց միության վարչության քարտուղար Պ. Գ. Աբելյանը հետևյալ կերպ մեկնաբանեց խորհրդարանում առաջ եկած իրարանցումը: «Շատ ցավալի է, – գրում է նա, – որ վրաց պառլամենտի հայ անդամների ոչ մի արդարացում

---

[39] *Ըստ «Թիֆլիսի քաղաքային գաղթականական բաժանմունքի կառավարիչ [Օ.Ս.] Բուկշտեյնի՝ քաղաքային վարչությանը տված զեկուցումից երևում է, որ անցյալ տարվա մինչև հունիսի 10-ը Թիֆլիս են եկել մոտ 40000 գաղթական, որոնցից 30 հազարը հովանավորվել են քաղաքային ինքնավարության կողմից, իսկ մնացած 10000-ը որևէ կերպ տեղավորվել է քաղաքում ու ապրել իրենց միջոցներով: Իսկ այն օրվանից (հուլիսի 17-ին), երբ կառավարությունը դադարեցրեց գաղթականներին նպաստ տալ, նրանցից 6 հազար հոգի տեղավորվեցին 300-րդ վերստում, 1500 հոգի քաղաքային հանրակացարանում, իսկ մնացածը ինքնագլուխ որևէ կերպ տեղավորվեց քաղաքում: Ներկայումս թեև քաղաքից հեռացողներ չեն եղել, բայց գաղթականների թիվը պակասել է հունիս ամսվա համեմատությամբ: Գաղթականների պակասելը եղել է նրանց մահացության հետևանքով, որի պատճառն եղել են վարակիչ հիվանդությունները և սովը: Այսպես, հունիսի 1-ից մինչև հունվարի 1-ը, այսինքն 7 ամսվա ընթացքում, Թիֆլիսում մեռել է 7-8 հազար գաղթական: Մնացած գաղթականներին ներկայումս օգնություն են ցույց տալիս քաղաքային, հայկական, ամերիկական և հունական գաղթակ[անական] մարմինները» (տե՛ս Գաղթականների վիճակը Թիֆլիսում. – «Ժողովրդի ձայն», 14. I. 1919):*

[40] *Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ, էջ 294:*

[41] *Վրացական կողմը սադրիչ համարեց այդ տեսակի ելույթները հայալեզու մամուլում, որի հետևանքով «Հորիզոն» պարբերականի լույս ընծայումն արգելվեց (տե՛ս «Մշակ», 12. XI. 1918): Այս միջադեպին վրաց ազգայնականների օրաթերթը շտապեց նվիրել մի գավեշտական մեկնաբանություն: «Օտարների ձեռքով հրատարակված լրագիրները մեղավոր են նաև այն ժամանակ, երբ լավ բաներ են գրում մեր կառավարության մասին: Նրանք ոչ մի իրավունք չունեն մեր ներքին գործերի մեջ խառնվելու» (տե՛ս «saqarTvelo» («Մաքարթվելո»), 19. XI. 1918):*

[42] *Տե՛ս «Մշակ», 12. XI. 1918, նաև՝ 13. XI. 1918, նաև՝ 14. XI. 1918:*

չգտնող անպատրաստ լինելն այդ հարցում, արգելք եղավ ճշմարտության երևան չգալուն»[43]:

Այս մեկնաբանությունը կարելի է վերագրել նաև 1919 թ. փետրվարի 21-ին ՀԱԽ-ում տեղի ունեցած քննարկմանը: Այդ օրը պարզվեց, որ «վերջին 4 ամսվա ընթացքում Ծալկայի 25000 գաղթականների համար ուղարկվել է ընդամենը 200 փ[ութ] ալյուր, 50 փ. շաքար և 200 հազար ռ[ուբլի] դրամ, որից 150 հազար ռ. ծախսվել է ծառայողների ռոճիկների վրա»[44]: Բակուրիանում ՀԱԽ-ի լիազոր նշանակված Ա. Թորոսյանը, Ծալկայում՝ Ա. Տեր-Գրիգորյանն ապաշնորհ գտնվեցին, ինչպես նաև զբաղվեցին գաղթականների համար նախատեսված օգնության յուրացումով[45]: Դրանից զատ բացահայտվել էին այլ խոշոր չարաշահումներ, որոնց մեջ մեղադրվող անձանց նկատմամբ ՀԱԽ-ը իր գործկոմին հանձնարարեց քննություն կատարել: Սակայն որևէ հետևություն այդպես էլ չարվեց, և չարագործները, ըստ Պ. Աբելյանի, «Վիրահայ Ազգային խորհրդում նստած քրիստոնյաների կողմից նույնիսկ հանդիմանության խոսքի չարժանացան…»[46]: Այս մտահոգիչ հանգամանքը, բնականաբար, չէր կարող նպաստել ՀԱԽ-ի հեղինակության ամրապնդմանը:

ՀԱԽ-ի գանձարկղը մշտապես հիմնովին դատարկ էր: Ֆինանսական կարիքները բավարարելու համար, ՀԱԽ-ում ՀՅԴ-ի խմբակցությունն առաջարկեց պարտադիր տուրք դնել վիրահայ հասարակության վրա, «իհարկե համապատասխան օրինագիծ մտցնելով վրացական պառլամենտ: Իսկ մինչև այն՝ անհրաժեշտ է միանվագ տուրք ժողովել հայ հարուստներից»[47]: Սոցիալիստական խմբակցությունները կողմ արտահայտվեցին այդ առաջարկին, ի դեմս ՀԺԿ-ին, որը լուրջ առարկություններ ունեցավ: Վերջինիս ներկայացուցիչները ՀԱԽ-ում կտրուկ հայտարարեցին, որ «կողմնակից լինելով պառլամենտով անցկացրած ստիպողական թե՛ միանվագ և թե՛ մշտական տուրքին… ո՛չ մի ձևով և ո՛չ մի նկատառումով, չէ կարող համաձայնել այլ կերպ բռնություն գործ դնելու քաղաքացիների վրա»[48]: ՀԺԿ-ի մտահոգությունը, սակայն, իզուր էր, քանզի վրաց իշխանությունները

---

[43] *Նա արդարացի ցասումով հավելում է, որ «Ախալքալաքի Հայրենակցության Վարչությունը պառլամենտի այդ նիստից մոտ 10 օր առաջ դիմել էր Վիրահայ Ազգային Խորհրդին և առաջարկել, որ սահմանափակումների հարցը պառլամենտի հայ անդամների միջոցով հարցապնդման առարկա դառնա: Վիրահայ Ազգային Խորհուրդը ոչինչ չարեց» (տե՛ս Ներքին տեսություն՝ Փախստական հարցի առթիվ.– «Նոր Հորիզոն» (Թիֆլիս), 4. XII. 1918): Կարծում ենք, այս տողերին կարելի է հավելել նաև, որ հիշյալ պահին ՀԱԽ-ն ամբողջությամբ դեռ չէր հաղթահարել իր ձևավորման գործընթացը: Նրա կուսակցական խմբակցությունների միջև գոյություն ունեին քաղաքական լուրջ տարամերժ տեսակետներ և հայացքներ: Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերին առանձնակի սուր կերպարանք ստացավ Հայաստան–Վրաստան տարածքային վեճը, որի պատճառով արդեն տեղի էր ունեցել վրաց խորհրդարանի բուռն նիստ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նրա հայ պատգամավորները խուսափում էին լրացուցիչ լարվածության աստիճան հաղորդել հայ-վրացական հարաբերություններին, քանզի վրացական կողմը նրանց ցանկացած ելույթին պատասխանում էր կտրուկ և ծայրահեղ բովանդակություն ունեցող ճառերով:*

[44] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 23. II. 1919:*

[45] *Տե՛ս Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 294:*

[46] *Տե՛ս նույն տեղում, էջ 482:*

[47] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 10. XII. 1918:*

[48] *Նույն տեղում:*

պատրաստ չէին գործնականում ֆինանսապես ամրապնդել և ուժեղացնել հայ համայնքի միասնականությունը անձնավորող կառույցը[49]:

Ֆինանսական ճգնաժամը ուղեկցում էր ՀԱԽ-ին իր գործունեության ողջ շրջանում: ՀՀ-ի կառավարությունից դրամ ստանալու նպատակով Երևան էին մեկնել ՀԱԽ-ի երկու լիազոր[50]: Հայոց կառավարությունը, սակայն, նախընտրեց Վրաստանի տարածքում ստեղծել ՀՀ-ի Խնամատարության նախարարությանը ստորադաս հատուկ ներկայացուցչություն, որին և հանձնարարեց «դեմոկրատական հանրապետությունում» բոլոր հայ գաղթականների և որբ երեխաների հետ կապված գործերի տնօրինումը: Այդ կառույցի գլուխ 1919 թ. մարտի 27-ին կարգվեց Վրաստանի ՀԱԽ-ի անդամ Դ. Գ. Դավիթխանյանը. նրան էր հանձնարարված նաև Հյուսիսային Կովկասում գտնվող հայ գաղթականների խնամատարական գործի ընդհանուր վերահսկողությունը[51]:

1918 թ. դեկտեմբերի 20-ին, Վրաստանի և Հայաստանի միջև զինված բախման օրերին, ՀԱԽ-ի գործունեությունը կասեցվեց: Վրաց կառավարության ձեռք առած քայլերի պատճառով, գաղթականական գործերով զբաղվող մարմինները զրկվեցին նրանց օգնելու իրական հնարավորությունից: Մի կողմից կնքվեց ՀԱԽ-ի համապատասխան բաժինը, առգրավվեց նրա ամբողջ գույքը, մյուս կողմից ձերբակալվեցին զավառներում աշխատող լիազորները: Բռնագրավման ենթարկվեցին Բորժոմի, Բակուրիանիի և այլ շրջաններում գտնվող հացի, հագուստի ու դեղորայքի ՀԱԽ-ի պահեստները[52]:

Հակամարտության առաջին իսկ օրերին, կողմերի հաշտության նպատակով՝ ՀԱԽ-ը միջամտելու փորձ կատարեց, որի համար լիազորվեցին Ա. Հ. Երզնկյանը, Լ. Գ. Թումանյանը և Պ. Մ. Դոլուխանյանը: Նրանց միացավ նաև Հայաստանի Խորհրդի անդամ Գր. Տեր-Օհանյանը: Թեպետ պատվիրակությունը նախապես ստացել էր Վրաստանի կառավարության համաձայնությունը՝ դեպքերի վայրը մեկնելու համար, Եկատերինենֆելդ (այժմ՝ Բոլնիս) բնակավայրի մոտ վրաց զվարդիականները նրանց ճանապարհը կտրեցին և վճռականապես պահանջեցին ետ դառնալ[53]:

Այդ օրերին Վրաստանի հայաշատ վայրերում ապօրինի ձերբակալությունները, խուզարկություններն ու բռնագրավումները դարձել էին սովորական երևույթ: Զինապարտ հասակի հայ տղամարդկանց կալանավորում էին, Քութայիսի մոտ ստեղծված հատուկ նշանակության ճամբարներում նրանց սովատանջ էին անում և օգտագործում ծանր աշխատանքների համար[54]:

---

[49] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 144, թ. 14 շրջ.:*

[50] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 21. III. 1919:*

[51] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:*

[52] *Տե՛ս Գաղթականությունը. – «Հառաջ» (Թիֆլիս), 18. I. 1919:*

[53] *Տե՛ս* «Знамя Труда» *(Թիֆլիս, 1918, -68) թերթից արտատպված հոդվածը տե՛ս Ճշմարտությունը Սանահնի դեպքերի մասին.– «Ժողովրդի ձայն», 20. XII. 1918: Նման միջնորդությամբ ՀԱԽ-ը հանդես եկավ նաև 1918 թ. հոկտեմբերին (տե՛ս «Ժողովրդի ձայն», 3. XI. 1918), սակայն ՀՅԴ-ի խմբակցությունը երկու պարագայում էլ ձեռնպահ մնաց և չմասնակցեց այդ առաքելությանը: Ավելին, այս ասպարեզում նրանց գործընկերների դրսևորած ջանասիրությունը հանդիմանության արժանացավ ՀՅԴ-ի Թիֆլիսի ճյուղի անդամների կողմից: Հատուկ մատնանշվեց, որ ՀԱԽ-ը «առջի ծառայություն» մատուցեց ՀՀ-ին՝ անտեղի խառնվելով այդ զուտ միջպետական բնույթ կրող գործի մեջ (տե՛ս «Հառաջ», 22. II. 1919):*

[54] *Ճամբարներ աքսորված հայերի թվաքանակը 1919 թ. հունվարի 3-ի դրությամբ կազմեց 1600 մարդ (տե՛ս Ձերբակալված հայերի մասին. – «Հառաջ», 12. I. 1919):*

Բուն Վրաստանի քաղաքներում և գյուղերում, ինչպես Գորի, Սղնախ, Թելավ, Գուրջաանի և այլն, տեղի ունեցան հայերի տների և խանութների թալան ու ավեր: Հալածանքների էին ենթարկվել հայ հայտնի հասարակական անհատները, այդ թվում նաև ՀԱԽ-ի անդամները[55]: Սոսկալի ծանր կացությունը ստեղծվել էր նաև Բորչալուի հյուսիսային մասում (Տաշիր), քանզի վրաց զինվորականությունը վրեժխնդիր եղավ գավառի խաղաղ հայ բնակչությունից: Ազգային հալածանքը Դաղեթ-Խաչենի և Շուլավերի գավառակներում հայերի սպանության բազմաթիվ դեպքերի պատճառը դարձավ: Հազարավոր մարդիկ ստիպված էին թաքնվել անտառներում՝ կոտորվելով սովից և ցրտից: «Դեմոկրատական հանրապետության» հեղինակությունն ի սկզբանե վարկազրկող այս անհրապույր և ամոթալի երևույթների մասին բազմիցս բարձրաձայնել է ժամանակի մամուլը[56]:

Դեռ զինված բախման շրջանում և նրա ավարտից անմիջապես հետո ՀԱԽ-ի անդամները մի շարք դիմումներ արեցին, նախ իր աշխատանքները բնականոն դարձնելու համար, որի համար պահանջվում էր հատուկ թույլտվություն, ինչպես նաև հայ բնակչության հոգսը և տագնապը թեթևացնելու փորձեր կատարեցին: Այդ նպատակն էր հետապնդում վարչապետի հետ 1918 թ. դեկտեմբերի 30-ի տեսակցությունը: Մայրաքաղաքում հայերի «ձերբակալությունների ժամանակ կատարվող անկարգությունների առթիվ Ն. Ն. Ժորդանիան, որպես կառավարության գլուխ հայտնել է իր զայրույթը և հաստատ համոզմունքը, որ այդպիսի անկարգությունների դեմ կառավարությունը ձեռք կառնի բոլոր միջոցները և բոլոր մեղավորներին ու հանցավորներին կպատժի ամենախիստ կերպով»[57]: Հակառակ այս խոստումներին, 1919 թ. հունվարի 5-ին Թիֆլիսում դարձյալ տեղի էին ունեցել հայերի ապօրինի զանգվածային ձերբակալություններ[58]:

---

[55] *Խախտելով պատգամավորական անձեռնմխելիությունն՝ այդ օրերին իշխանությունները կալաքի տակ վերցրեցին խորհրդարանի անդամ Զ. Զորյանին, ինչպես նաև Թիֆլիսի քաղաքային դումայի իրավասուներ Ա. Աբեղյանին, Ս. Թոսունյանին, Ա. Ամիրխանյանին, Գ. Ճոնյանին, Ե. Պապյանին (տե՛ս Լրատու. – «Հառաջ», 23. I. 191):*

[56] *Տե՛ս «Հառաջ»-ի հետևյալ նյութերը. Դաղեթ-Խաչենը (16. I. 1919), Բոլնիս-Խաչեն (30. I. 1919), Շուլավերում և իր շրջանի հայ գյուղերում վրաց զորքերի ձեռքով կատարած թալանն ու ավերածությունները (31. I. 1919), Շամշուդայում (19. II. 1919), Վրաց զորքերի անկարգությունները հայ գյուղերում (7. II. 1919), Գազանություններ Դաղեթի շրջանում (11. II. 1919), Վրաց զորքերի գազանությունները Բոլնիս-խաչենում (15. II. 1919): «Հայ-վրացական պատերազմի կապակցությամբ կատարված հակահայկական հալածանքների… բացատրությունը պետք է որոնել Վրաստանի հայությունը նոսրացնելու և տնտեսապես թուլացնելու այն քաղաքականության մեջ… որին հետևում էր Ժորդանիա-Ռամիշվիլիի կառավարությունը իր գոյության պահից սկսած՝ վրաց շովինիստներին բավարարություն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքականության ճանապարհը: Նրա իրականացման համար այլևս կարիք չկար օրինական ձևակերպումների հետևից ընկնել…» [տե՛ս Ա. Զ ա մ ա լ յ ա ն. Հայ-վրացական կնճիռը. – «Հայրենիք» (Բոստոն), 1929, ապրիլ, էջ 145]: Ժամանակի նշանավոր և իրազեկ գործչի այս սպառիչ խոսքերը հավելյալ մեկնաբանության անհրաժեշտություն չունեն:*

[57] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի պատգամավորությունը կառավարության նախագահի՝ Ն. Ն. Ժորդանիայի մոտ. – «Ժողովրդի ձայն», 1. I. 1919:*

[58] *Տե՛ս* Массовые аресты.– «Грузия» *(Թիֆլիս), 7. I. 1919. Այդ օրը ձերբակալվեց շուրջ 5 հազ. մարդ և ՀԱԽ-ի ճիշտ ժամանակին կատարած միջնորդության շնորհիվ բարեբախտաբար հաջողվեց կարճել նրանց դեպի Քութայիս արտաքսելու մասին հրահանգը:*

Շրջկալների մեջ ընկած բոլոր հայ տղամարդկանց անխտիր մեկուսարան էին նետում, և նույնիսկ այն օտարազգի անձանց, ովքեր «չէին կարողանում ապացուցել, որ հայ չեն»[59]:

1919 թ. հունվարի 6-ին ՀԱԽ-ի ներկայացուցիչներն այցելեցին վարչապետին և «մատնանշեցին այն բոլոր ապօրինություններն ու խժդժությունները, խոշոր ու մանր կաշառակերությունն ու կազմակերպված թալանը, որ տեղի է ունեցել հայերի վերաբերությամբ այս ձերբակալությունների առթիվ և խնդրեցին կտրուկ միջոցներ ձեռք առնել մեղավորներին գտնելու և պատժելու համար»[60]: Մեկուկես ժամ տևած զրույցի ժամանակ Ն. Ժորդանիան խոստացավ բավարարել բոլոր հիմնավորված պահանջները: Նրանց շարքում գլխավոր տեղ էր գրավում ՀԱԽ-ի լիազորների մասնակցությամբ քննիչ հանձնաժողովի ստեղծման առաջարկը, որը միանգամայն ընդունելի համարվեց:

1919 թ. առաջին օրերին ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Վրաստանի և նրա կառավարության հետագա ճակատագիրը տակավին մնում էր անորոշ: Թիֆլիս ժամանած բրիտանական բանակի առաջին զորավարները (գեներալ Ու. Ռայկրոֆտ և ուրիշներ) դրսևորեցին անբարյացակամ վերաբերմունք Ն. Ժորդանիայի վարչակարգի նկատմամբ, որպես գերմանական «դրածոների»: Հայ հասարակայնությունն, ընդհակառակը, հույսեր էր փայփայում, որ Անտանտի հաղթանակի զոհասեղանին մատուցված արյունաքամ հայոց ժողովուրդը իրավամբ պետք է վայելի Միացյալ Թագավորության զինվորականության երախտագիտությունը, բարեհաճությունը և հովանավորությունը: Մինչև այն պահը, երբ պատռվեց անգլիացիների «հայասեր» դիմակը և մերկացվեց նրանց ուխտադրուժ քաղաքականությունը, առժամանակ, ինչպես հայտնի է, դեռ մոլորություն էր տարածված, թե նրանք եկել են նաև օգնելու հայերին: Վրաց վարչապետը տրամադրված էր արագորեն քողարկել այն բոլոր հանցագործությունների հետևանքները, որոնք թույլ էին տրվել կառավարության կողմից խաղաղ հայ բնակչության նկատմամբ: Նրա բերանով շռայլորեն տարածվող ամեն տեսակի խոստումները, ինչպես պարզվեց, ձևական բնույթ ունեին և, ակներևաբար, ժամանակ շահելու նպատակ էին հետապնդում: Խոստացած քննիչ հանձնաժողովը, որի անդամ էր նաև ՀԱԽ-ի լիազոր Դ. Գ. Դավիթխանյանը[61], այդպես էլ վճռական որևէ դեր չունեցավ հայերին հալածողների ապօրինությունները բացահայտելու գործում: Եվ դա, իսկապես, զարմանալի չէ, քանզի գլխավոր հանցավորները հենց վրաց կառավարության անդամներն էին: Ավելին, շարքային ոճրագործներին անպատիժ թողնելը, որպես անմիջական հետևանք ունեցավ 1919 թ. ապրիլ ամսին

---

[59] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի նախագահությունն ու գործադիր մարմինը կառավարության նախագահի մոտ.– «Ժողովրդի ձայն», 9. I. 1919:*

[60] *Նույն տեղում:*

[61] *Տե՛ս «Ժողովրդի ձայն», 22. I. 1919:*

հայերի տների և ունեցվածքի զանգվածային թալանն ու ավերը Գագրայի գավառում[62]:

ՀՅԴ-ն, որը հանդիսացավ Վրաստանի ՀԱԽ-ի ստեղծման հիմնական և հետևողական նախաձեռնողը, առանձնակի սրտացավությամբ էր նկատում նրա բոլոր թերությունները: Պարիտետի սկզբունքով գումարած ՀԱԽ-ի առաջին կազմը պետք է գործեր առժամանակ, մինչև համընդհանուր ընտրությունները: Ենթադրվում էր, որ համաժողովրդական քվե ստացած Վրաստանի հայոց ազգային ժողովը կձևավորի ՀԱԽ-ի նոր կազմը, բայց դա տեղի չունեցավ նախապես որոշված ժամկետներում, ուստի ՀՅԴ լրագրում ընծայվեց հետևյալ դժգոհ կարծիքը. «Վրաստանի Հայոց Ազգային խորհուրդը ունեցել է 4-5 նիստ և այդ նիստերը եկել են ապացուցելու, որ այդ մարմինն իր գործունեությամբ բնավ չի արդարացնում իր վրա դրած հույսերը… Ազգային խորհուրդ կոչվածը դարձել է մի մարմին, ուր կուսակցությունները մարզվում են հռետորական և «դիվանագիտական» պարապմունքների մեջ… Պետք է օր առաջ նշանակել Վրաստանի հայության Սահմ[անադիր] ժողովի ընտրությունները և հնարավորություն տալ, որ դեմոկրատիայի իսկական ընտրելիներն իրենց ձեռքը վերցնեն հայ աշխատավորության կրթական-կուլտուրական կյանքի ղեկը»[63]:

1919 թ. փետրվարի 18-ին ՀՅԴ-ի Թիֆլիսի «ներկայացուցչական ժողովում» լսվեց ՀԱԽ-ում նրա լիազորների հաշվետվությունը: Ելույթ ունեցողները (Ա. Գ. Աբեղյան, Հ. Գ. Արղության և այլք) միակարծիք եղան, որ գործող ՀԱԽ-ը պետք է լուծարվի և նրա փոխարեն ստեղծվի նորը: ՀԱԽ-ը մեղադրվեց, որ ձախողել է գաղթականության խնամելու առաքելությունը, ինչպես նաև հասցրել է վիրահայության մշակութային գործերն անմխիթար վիճակի: Ժողովի մասնակիցները դարձյալ բնութագրեցին պարիտետի սկզբունքով կազմված ՀԱԽ-ը որպես «քառանկյունի անիվ»: Հատուկ նշվեց, որ ՀՅԴ-ի խմբակցությունն իր գործընկերներին բազմիցս առաջարկություններ է տվել ՀԱԽ-ի վերընտրության մասին, սակայն գործը կանգ էր առել կանոնակարգ մշակող հանձնաժողովում[64]: 1919 թ. մարտի 14-ին ձայների ճնշող մեծամասնությամբ ՀԱԽ-ը մերժեց ՀՅԴ-ի խմբակցության առաջարկը լուծարման մասին[65]: Այսպիսով, հարցի կարգավորումն առժամանակ հետաձգվեց, մանավանդ հիշյալ դեպքից երկու օր առաջ գումարվել էր Վրաստանի Սահմանադիր ժողովը (ՍԺ): Վերջինիս անդամակցելու համար ձայների պահանջված քանակն ապահովեցին միայն վրացական ազգային կուսակցությունների համամասնական ցուցակները: Դա պայմանավորված էր «դեմոկրատական հանրապետությունում» որդեգրված «ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության» սկզբունքի լուրջ խախտումներով: ՎԴՀ-ի «հպատակություն» սահմանող կանոնակարգի դիտավորյալ արգելքների շնորհիվ ձայնի իրավունքից

---

[62] *Տե՛ս Բ. Վ. Մ ա ի լ յ ա ն. Աբխազիայի հայ գաղութի պատմությունից (1918-1920 թթ.). – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVII, Երևան, 2009, էջ 115-116:*

[63] *Տե՛ս Քառանկյունի անիվը. – «Աշխատավոր», 27. IX. 1918:*

[64] *Տե՛ս Հ. Յ. Դաշնակցություն՝ ներկայացուցչական ժողով. – «Հառաջ», 22. II. 1919:*

[65] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհուրդ. – «Ժողովրդի ձայն», 19. III. 1919:*

զրկվեց ոչ վրացի ազգաբնակչության ստվար զանգվածը: ՎԴՀ-ի հայաշատ վայրերում 1918 թ. դեկտեմբերին, հայտնի պատճառներով, բնակչությունն ահաբեկված էր. օրինակ, Սղնախում (Կախեթ) վրաց գվարդիականները խլում էին ընտրողների ձեռքից ՀՅԴ-ի օգտին տրված քվեաթերթիկները[66]: Փաստորեն, ստեղծված ձախորդ քաղաքական պայմաններում, ՀԱԽ-ը մնաց Վրաստանի հայ համայնքի միակ ներկայացուցչական ամբիոնը:

Վրաց քաղաքական միտքը, կուսակցական պատկանելությունից զատ, առանձնակի եռանդով քարոզում էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցչական մարմինների գոյության դեմ: «Այս բոլոր ազգային խորհուրդները հակավրացական քաղաքականություն վարող հաստատություններ են,– պնդում էին ազգային դեմոկրատները: – Եթե ազգային փոքրամասնություններն աչքի առաջ ունեն լոկ մշակութային նպատակներ, ապա, կտեսնեն, որ նրանց ազգային զարգացումն անձեռնմխելի է և ապահովված: Այս պատճառով ազգային խորհուրդներն ավելորդ են»[67]: Արմատական ազգայնականներից ետ չէին մնում նաև սոցիալիստական և, հետևապես, «միջազգայնականության» պատմության հազած վրաց սոցիալ-դեմոկրատները: Նրանց մամուլն աներեսաբար համոզում էր հասարակությանը, թե «Սահմանադիր ժողովը հանդիսանում է, առանց ազգային խտրականության, Վրաստանի բոլոր քաղաքացիների ներկայացուցիչը: Հետևաբար, որևէ ազգային խորհուրդների գոյությունն անթույլատրելի է…»[68]: Ինչպես տեսանք, ՍԺ-ի ընտրություններն իրականացվում էին լուրջ խախտումներով, երբ ազգային փոքրամասնությունների շուրջը, հանձինս հայերի, ստեղծվել էր ահաբեկման մթնոլորտ: Քողարկելով այս խտրականության քաղաքականությունը, ՎԴՀ-ի առաջնորդները՝ ՎՄԴԲԿ-ի համամասնական ցուցակով խորհրդարան էին մտցրել նաև հայազգի չորս պատգամավոր, որոնց ներկայությունը ՍԺ-ում հեգնանք էր առաջացնում նույնիսկ վրացական կողմի մոտ[69]: Բոլորի համար միանգամայն պարզ էր, որ այս խուսանավող քայլերը չէին կարող փոխարինել 400 հազ. թվաքանակ ունեցող Վրաստանի հայ համայնքի լիակատար ներկայացուցչությունը:

Վրաստանում գործող հայկական քաղաքական մեծ ու փոքր բոլոր հոսանքների համաձայնությամբ, ի վերջո, որոշվեց ՀԱԽ-ի վերընտրություններն իրականացնել 1919 թ. հուլիսին: Այս կարևոր իրադարձությունը

---

[66] *Տե՛ս* «Народное знамя» *(Թիֆլիս), 9. III. 1919. Մթնոլորտը շիկացած էր նաև Դուշեթում, որտեղ «արգելված է խոսել հայերեն: Ընտրությունների ժամանակ հայտարարել են, որ այն հայը, որ ձայն կտա -4-ին (ՀՅԴ-ի ընտրացուցակը. – Բ. Մ.) իսկույն ետ կաքսորվի…» (տե՛ս «Հառաջ», 8. II. 1919):*

[67] *Տե՛ս* «საქართველო» *(«Սաքարթվելո»), 1919, -68:*

[68] «ერთობა» *(«Միասնություն»), 1919, -92-ի թերթից արտատպված հոդվածը տե՛ս* Национальные советы. – «Кавказское слово», *1. V. 1919.*

[69] *«Խոսք չկա, ոչ մի հայ ձայն չէ տվել Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ցուցակին և եթե այնտեղ (իմա՝ ՍԺ-ում. – Բ. Մ.) նստած են մենշևիկների անվան տակ մի երկու հայ «մանեկեն»՝ այդ միմիայն մենշևիկյան մի սիմուլյացիա է և ուրիշ ոչինչ»,– «պարզաբանում էր» վրաց ազգայնականների քաղաքական հայացքները քարոզող պարբերականը. «ახალი საქართველო» («Նոր Սաքարթվելո») թերթից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կյանք.– «Նոր Աշխատավոր», 18. VII. 1919:*

պետք է հնարավորինս ավելի կատարյալ կապ հաստատեր Վրաստանի տարբեր քաղաքներում և գավառներում բնակվող հայ համայնքի առանձին մասերի միջև: Համամասնական վեց ընտրացուցակներն ընդգրկում էին ՀՅԴ-ի, ՀԺԿ-ի, ՌՍԴԲԿ-ի, ՎՍԴԲԿ-ի, ՌՍՀԿ-ի և Հնչակյան կուսակցության թեկնածուներին, ինչպես նաև առանձին խմբով հանդես եկած Աբխազիայի հայազգի սոցիալ-դեմոկրատներին[70]: Շրջանային ընտրական հանձնաժողովներ էին կազմակերպվել Թելավում, Սղնախում, Գորիում, Սուխումում, Քութայիսում, Ախալցխայում և Թիֆլիսի շրջանում[71]: ՀԱԽ-ի կենտրոնական ընտրական հանձնաժողովի խնդրանքով Վրաստանի ՆԳ նախարար Ն. Վ. Ռամիշվիլին «խոստացավ մի շրջաբերականով հայտնել կոմիսարներին և գեմստվային վարչություններին, որ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ընտրությունները տեղի են ունենում կառավարության գիտությամբ և ընտրությունների դեմ խոչընդոտներ չպիտի հարուցվեն»[72]: Սակայն շուտով հայտնի դարձավ, որ վրաց կառավարությանը դիմել են ՎՍԴԲԿ հայազգի անդամները, մասնավորապես Կախեթի շրջաններից, որոնք խնդրում էին «ընտրությունները հետաձգել մինչև աշուն, որովհետև դաշտային եռուն աշխատանքների պատճառով այդ շրջանների ազգաբնակչությունը հնարավորություն չունի պետք եղած չափով մասնակցել ընտրական աշխատանքներին»[73]: Ակներևաբար մոգոնված այս պատճառաբանությունը համոզիչ կերպով հերքվեց ՀԱԽ-ի կողմից[74]: Սակայն, նշանակված ժամկետից երկու օր առաջ՝ 1919 թ. հուլիսի 18-ին, ՀԱԽ-ի ընտրությունները կամայաբար կասեցվեցին կառավարության որոշմամբ[75]: Գլխավոր պատճառներից էր նաև այն, որ ՀԱԽ-ի ընտրությանը Ջավախքի (որպես վիճահարույց տարածքի) հայության մասնակցությունը նախատեսված չէր: Իրականում, այս արգելքի բուն պատճառը, մեր կարծիքով, թաքնվում է արտաքին քաղաքականության ասպարեզում[76]: Հայաստանի կառավարությունը հրաժարվեց միանալ 1919 թ. հունիսին կնքված վրաց-ադրբեջանական հակառուսական դաշինքին: Հետևապես, ճնշումների թիրախ դարձավ ՀՅԴ-ի Վրաստանի ճյուղը, արգելվեց նրա մամուլի մարմին «Աշխատավոր» պարբերականի հրատարակությունը[77]: Ակնկալելով ՀՅԴ-ի անխուսափելի հաջողությունը ՀԱԽ-ի համընդհանուր

---

[70] *«Նոր Աշխատավոր», 10. VII. 1919:*

[71] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը. – «Ժողովրդի ձայն», 12. VI. 1919:*

[72] *Տե՛ս Տեղական կյանք. – «Ժողովրդի ձայն», 10. VII. 1919:*

[73] *Տե՛ս Տեղական կյանք.– «Ժողովրդի ձայն», 19. VII. 1919:*

[74] *Տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի 1919 թ. հուլիսի 18-ի որոշումը. – «Գործավոր» (Թիֆլիս), 28. VII. 1919:*

[75] *Տե՛ս Վրաստանի Կառավարության գրությունը Վիրահայ Ազգային Խորհրդին.– նույն տեղում:*

[76] *Հնչակյան կուսակցության մամուլի էջերում ևս մի կարևոր կարծիք է գետեղված: Ըստ այդ տեսակետի, գոյություն ուներ նաև մեկ այլ դրդապատճառ: «Իսկական պատճառը, – պնդում է հոդվածագիրը, - -3 (իմա՛ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության – Բ. Մ.) չարաբաստիկ ցուցակի հավանական անհաջողությունն էր, որ եկավ քար ձգելու Վրաստանի հայ ժողովրդի գեթ այս անգամ իրագործվելիք ընտրական գործին, և մենք համոզված ու հավատացած ենք, քար գցեց ընդմիշտ» (տե՛ս Վիրահայ Ազգային Խորհրդի ընտրությունների «հետաձգումը».– նույն տեղում):*

[77] *Վրաստանի ներքին գործերի նախարարի հայտարարությունը «Աշխատավոր» թերթի փակման առթիվ. – «Ժողովրդի ձայն», 12. VII. 1919:*

ընտրությունների պարագայում, վրաց իշխանություններն այս հարցում ևս նախընտրեցին արգելքների ճանապարհը: Նրանց մեղադրանքների շինծու և արհեստական լինելն ապացուցեցին նաև 1919 թ. օգոստոսին իրականացված Վրաստանի Սահմանադիր ժողովի լրացուցիչ ընտրությունները: Ախալքալաքի, Ախալցխայի և Բորչալուի գավառներում նրանց արդյունքներն սպասելի հաղթանակ բերեցին ՀՅԴ-ի համամասնական ցուցակին: Զ. Ն. Զորյանը, Տ. Գ. Ավետիսյանը և Գ. Ա. Տեր-Ստեփանյանը, իրավամբ, անդամակցեցին ՍԺ:

Հայտնվելով արհեստածին արգելքների ճիրաններում՝ ՀԱԽ կազմող կուսակցությունները փորձում էին գտնել այլ ճանապարհ հայ համայնքի վստահությունը վերականգնելու և ամրապնդելու համար: Չկարողանալով ձեռք բերել Վրաստանի ողջ հայության քվեն, ՀԱԽ-ը առաջնորդող հոսանքները, բնականաբար, վերադարձ կատարեցին միջկուսակցական անդրկուլիսյան համաձայնությունների պրակտիկային: ՀԱԽ-ի կազմավորման այդ եղանակը, ի սկզբանե, ցույց տվեց իր բոլոր արատավոր և մութ կողմերը: Սակայն այլ երկընտրանք, վրաց իշխանությունների բռնած չար դիրքի հետևանքով, չէր էլ մնում: Ուշագրավ է, որ ՀԱԽ-ի համընդհանուր ընտրությունների նախօրոք ձախողման հայ սոցիալ-դեմոկրատների նախաձեռնող խումբը, որը ներկայանում էր իբրև ՎՍԴԲԿ-ի «հայկական սեկցիա»[78], անմիջապես առաջ քաշեց պահանջ ՀԱԽ-ում իրեն ևս տեղեր հատկացնելու մասին[79]: Այդ առաջարկը լուրջ քննարկման առարկա դարձավ: Ոմանք կարծում էին, որ «հայկական սեկցիայի» մասնակցությունը ՀԱԽ-ում կստեղծի լրացուցիչ լծակներ նրա գործերը ներսից վերահսկելու և անհրաժեշտ դեպքում, ի շահ վրաց կառավարությանը, անվտանգ ուղղությամբ տանելու համար[80]:

Կուսակցություններից յուրաքանչյուրն ուզում էր ՀԱԽ-ի կազմում բացառիկ դիրք ունենալ: Դրա համար էլ քաղաքական ամեն մի հոսանք ձգտում էր այնտեղ շատ ներկայացուցիչներ ունենալ: ՀԱԽ-ի կազմավորման պարիտետային սկզբունքը, ի վերջո, վերացավ և նրա փոխարեն առաջ եկավ ոչ պակաս վիճահարույց ու խճճված կառուցվածք: Երբ վերջապես

---

[78] *Այդ կառույցի (շուրջ 150 կուսակցական) ղեկավարն էր ՎՍԴԲԿ ԿԿ-ի անդամ Մ. Կ. Վարդոյանը: Մեկցիան ուներ պարբերական՝ «Բանվորի ձայն» (Թիֆլիս) շաբաթաթերթը: Առավելապես աչքի էր ընկնում «հայկական սեկցիայի» Աբխազիայի ճյուղը, որի անդամները (Խ. Ավդալբեգյան, Տ. Սողոմոնյան, Ե. Մինասյան, Վ. Ռշտունի և այլք) գլխավորում էին նաև Սուխումի հայոց շրջանային ազգային խորհուրդը: ՎՍԴԲԿ-ի առանձին հայ անդամները իրենց դրսևորեցին որպես վրաց իշխանությունների քաղաքականության հլու կամակատարներ, քանզի «դաշտային եռուն աշխատանքների» մասին մոգոնած պատրվակն արդեն չէր էլ կարող քողարկել այս պարզ հանգամանքը: Նման երևույթ տեսանք նաև Լոռվա ճակատագրի վճռման հարցում: «Սեկցիայի» ղեկավարը հորդորում էր գավառի հայ ազգաբնակչությանը կողմ արտահայտվել Վրաստանի սահմանների մեջ «չեզոք գոտին» կցելու օգտին (տե՛ս* Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г.– январь 1921 г.). – *ՊԲՀ, 2010, -1, փաստ. 2, էջ 259):*

[79] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 61, թ. 20:*

[80] *Տե՛ս նույն տեղում, գ. 84, թ. 12 շրջ.: «Սեկցիայի» հանդեպ արտահայտված անվստահության նշանները, ինչպես հաստատվեց հետագայում, անհիմն չէին: Այսպես, հայկական մշակութային ինքնավարության հարցում նրա խմբակցությունը բացեիբաց հայտարարեց, որ ՀԱԽ-ի «այն բոլոր քայլերի վերաբերմամբ, որոնք ուղղված կլինեն ավտոնոմիայի պաշտպանությանը, ձեռնպահ է մնալու կամ, եթե հարկ համարեց, հակառակ քվե է տալու» (տե՛ս «Բանվորի ձայն», 11. VII. 1920):*

պետք է որոշվեր ՀԱԽ-ի կազմը, սկսվեցին թեժ վիճաբանությունները: Տեղերի վերաբաշխման մասին այս վեճերն առժամանակ կաթվածահար էին արել առանց այն էլ ՀԱԽ-ի ոչ արդյունավետ և անկատար աշխատանքը: 1919 թ. սեպտեմբերին ձեռք բերվեց որոշակի համաձայնություն, որով վերաբաշխվեցին աթոռները ի շահ ՀՅԴ-ի լիազորների[81]: Վերջին հանգամանքը նպաստավոր եղավ նաև ազգային կուսակցությունների համար, որոնք հանդես եկան ի դեմս սոցիալիստական հոսանքների միավորմանը: ՀՅԴ-ն, ՀԺԿ-ն, հնչակյանները և հայ արդյունաբերողների ներկայացուցիչները միահամուռ կամք դրսևորելով կազմեցին ՀԱԽ-ի նոր գործկոմ, որի առաջնորդելու գործը ստանձնեցին հայտնի ձեռներեց Մ. Արամյանցը, գիտնական-հայագետ Ե. Տեր-Մինասյանը, ՍԺ-ի անդամ Գ. Տեր-Ստեփանյանը: Էսդեկների և էսէռների լիազորները գործկոմի մեջ տեղ չգտան, քանզի ակնկալելով ուժերի ոչ նպաստավոր հարաբերակցությունը՝ ՌՍԴԲԿ-ի, ՎՍԴԲԿ-ի և ՌՍՀԿ-ի խմբակցությունները սկզբից ևեթ հրաժարվեցին թեկնածուներ առաջադրել[82]: ՀԱԽ-ին նոր շունչ հաղորդող քայլերից մեկը եղավ նաև նախագահության վերընտրությունը, որը համալրեցին Բ. Թոփչյանը (ՀՅԴ), Ա. Մխիթարյանը (ՀԺԿ) և հնչակյան Յ. Ղազարյանը (Լազո)[83]: Կարծես, ի վերջո, ստեղծվել էր ՀԱԽ-ի այն միջուկը, որը պետք է առաջ մղեր կուտակված մեծ ու փոքր բոլոր խնդիրները: Դեպքերը, սակայն, զարգացան այլ կերպ. ՀԱԽ-ի ղեկավար նորակազմ մարմինները, միջկուսակցական խորհրդակցության որոշման հետևանքով, գրեթե անմիջապես լուծարվեցին: Պաշտոններում վերահաստատվեց նախկին աշխատակազմը[84]:

Այսպիսով, ՀԱԽ-ը գլխավորող մարմինների մեջ, առանձնապես ֆինանսական բաժնի կազմում, հայ գործարար խավի նշանավոր ներկայացուցիչների (Մ. Արամյանց, Ե. Մայիլյան և այլք) ներգրավելու ձախողման փորձն առաջ բերեց և այնուհետև ամրապնդեց ՀԱԽ-ի նկատմամբ ունևոր դասի կասկածամտությունը, ինչը, փաստորեն, մեծապես նպաստեց այդ կառույցի ֆինանսական առկա ճգնաժամի էլ ավելի խորացմանը:

Այս վայրիվերումների գլխավոր պատճառը սոցիալիստական թևի դիմադրության և նրա կողմից հետագա կառուցողական աշխատանքի նենգադուլն է, քանզի «ձախ» հոսանքների ներկայացուցիչները՝ Ա. Հ. Երզնկյան և այլք, ներկայացված չէին գործկոմի նոր աշխատակազմում: Աներկբա է ևս մի բան, որ վրաց կառավարությունն անհետևանք չէր թողնի իր կուսակիցների՝ ՎՍԴԲԿ «հայկական սեկցիայի» ներկայացուցիչներին որևէ պաշտոն չտալը: Իշխանությունները ցանկանում էին ՀԱԽ-ի գլուխ կարգել լոյալ սոցիալիստներին՝ պաշտոնական որոշումների լուռ կամակատարներին: Սակայն ձգտման համար գլխավոր արգելք էր դիտվում ՀՅԴ խմբակցությունը: Վերջինիս մեկուսացման համար «հայկական սեկցիայի» լիազորները ՀԱԽ-ում դիմեցին գործնական քայլերի: Այսպես, «սեկցիայի»

---

[81] *Տե՛ս Վրաստանի Հայոց Ազգ[ային] Խորհուրդ.– «Բանվորի ձայն», 21. IX.1919:*

[82] *Տե՛ս* Хроника: В армянском национальном совете Грузии. – «Борьба» *(Թիֆլիս)*, 2. X. 1919.

[83] *Տե՛ս* «Борьба», 1. X. 1919.

[84] *Տե՛ս* «Борьба», 4. X. 1919.

ժողովը որոշեց՝ «ոչ մի դեպքում դաշնակցության հետ համաձայնության չգալ նախագահության կազմելու խնդրում, այլ ուրիշ խմբակցությունների հետ ժամանակավոր համաձայնությամբ լուծել այդ խնդիրը և սոցիալիստական մեծամասնություն ստեղծել թե՛ նախագահության և թե՛ գործադիր մարմնի մեջ»[85]: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, քաղաքական պայքարը ՀԱԽ-ի ներսում թեժացվում էր այն պարագայում, երբ անհրաժեշտ էր, առաջին հերթին, ազգային միասնականության կամք դրսևորել՝ ստեղծարար և կառուցողական աշխատանք կազմակերպելու համար: Մամուլը իրազեկում էր, որ «այնուամենայնիվ դաշնակցականներն որոշ աշխատանք կատարել էին, թե ինչ ձևով այդ իրենց գործն է, միայն փաստն այն է, որ երբ քվեարկության դրվեցին Ա[զգային] Խորհրդի նախագահության համար երկու թեկնածուները՝ Ա. Երզնկյանը[86] սոցիալիստական երեք ֆրակցիաների, իսկ Բ. Թոփչյանը դաշնակցականների կողմից, վերջինն ստացավ 26 ձայն, այսինքն երկու ձայն ավելի սոցիալիստների թեկնածուից և ընտրվեց Ազգ[ային] Խորհրդի նախագահ: Զեռնպահ էին ռուսական կադետների երկու հայ ներկայացուցիչները»[87]: ՀՅԴ-ի թեկնածուի օգտին 28-ի թվում հանդես եկան նաև ՀԺԿ-ն, հնչակյանները և հայ գործարարների խմբի անդամները: Հատկանշական է, որ ազգային այս հոսանքների հակառակորդն էին, զարմանալի համաչափությամբ, և՛ հայ սոցիալիստները, և՛ հայ լիբերալները, որոնք հանդես էին գալիս ռուս կամ վրաց կուսակցությունների դրոշի ներքո:

1920 թ. փետրվարին հայկական քաղաքական հոսանքները Վրաստանում դարձյալ համաձայնության եկան ՀԱԽ-ի վերակազմավորման մասին, որի անդամների համար հատկացվում էր 30 աթոռ: Այս պարագայում ՀՅԴ-ն ունեցավ 10-ը, իսկ մյուս կուսակցություններից (ՎՄԴԲԿ, ՌՄԴԲԿ, հնչակյաններ, էսէռներ) յուրաքանչյուրը 5-ական տեղ[88]: Այս կառուցվածքը պահպանվեց մինչև ՀԱԽ-ի գոյության վերջին պահը:

Արձագանքելով բազմակուտակ խնդիրներին՝ ՀԱԽ-ը չէր կարող չփոխհարաբերվել վրաց վարչական տարբեր տեսակի մարմինների հետ, որոնք, սակայն, ազատ էին նրա դիմումներն անտեսելու մեջ: «Անմերժելի» կեցվածք ընդունելով՝ վրացական կողմը համառորեն պնդում էր, որ ՀԱԽ-ը նախ և առաջ պետք է լինի միմիայն մշակութալուսավորչական հաստատություն[89],

---

[85] *Տե՛ս «Բանվորի Ձայն», 28. IX. 1919:*

[86] *Հայրենի արդի պատմագիտության շրջանակներում կարծիք է ձևավորվել, որ հայ սոցիալ-դեմոկրատները, հանձին Ա. Երզնկյանի, «հետևում էին իրենց ավագ գործիչներ վրաց մենշևիկներին»: (տե՛ս Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Հայաստանի Հանրապետության անկախության ուղին. – ՊԲՀ, 2008, -1, էջ 30): Այս կարևոր պատմական դիտարկումը բացահայտում է ժամանակի քաղաքական իրողությունը, որն ունի նաև մեկ այլ հանգամանք: ՀԱԽ-ի գործկոմի ղեկավար Ա. Երզնկյանի «լավ» հարաբերությունները իր նախկին կուսակից վրացի գործիչների հետ հնարավորություն էին ընձեռում եթե ո՛չ լիակատար լուծել, ապա գոնե մերթ ընդ մերթ մեղմացնել այն կնճռոտ խնդիրները, որոնք օր օրի առաջանում և թանձրանում էին Վրաստանի հայ համայնքի կյանքում: Հետևապես, սխալված չենք լինի, եթե մեջ բերենք Ե. Տեր-Մինասյանի վկայությունը: Անվանի գիտնական- հայագետը ականատեսի իրավունքով գրում է, որ «ազգային խորհրդի մեջ ամենաազդեցիկ և կարկառուն անձնավորությունը սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչ Արամայիս Երզնկյանն էր» (տե՛ս Ե. Տ ե ր – Մ ի ն ա ս յ ա ն. Հուշեր իմ կյանքից (Պ. Մուրադյանի խմբագրությամբ և առաջաբանով), Երևան, 2005, էջ 90:*

[87] *Տե՛ս Ազգային Խորհրդի 3-րդ նիստը. – «Բանվորի ձայն», 5. X. 1919:*

[88] *Տե՛ս* Хроника. – «Борьба», 10. II. 1920.

[89] *Տե՛ս ««ՅՐՈՈԾԱ» (□Միասնություն□), 29. IV. 1919.*

այլ ոչ թե Վրաստանում հայերի արտերկրային ազգային ինքնակառավարման ներկայացուցչական մարմին: ՎԴՀ-ում դեռ ձևավորվող պետահիրավական դաշտի լուրջ թերությունների հետևանքով ՀԱԽ-ի դերը, առանձնապես հեռանկարում, բոլորի համար մնում էր շատ աղոտ և մշուշապատ: Այսպիսով, փաստացի զրկված լինելով հասարակական, իրավական, քաղաքական լիազորություններից, ՀԱԽ-ը, ի վերջո, պահպանեց լոկ մի գործառույթ, և այն է՝ Վրաստանում հայկական ժողովրդական դպրոցների համակարգն առաջնորդելու գործը[90]*:*

«Ազգայնացման», իմա՝ վրացացման, տխրահռչակ քաղաքականության հետևանքները մեծ մասամբ մեկուսացրին և օտարեցին Վրաստանի ազգային փոքրամասնությունները նրա կառավարական, օրենսդրական, վարչական մարմինների գործունեությունից[91]*: Որոշումների կայացման լծակները ամբողջությամբ հայտնվեցին վրաց ազգության վերնախավի ձեռքերում: Այս պարագայում փոքրամասնություններին այլ ելք չէր էլ մնում, քան պահանջել հատուկ կարգի երաշխիքներ իրենց բուն իրավունքները պաշտպանելու համար: Աբխազները, օսերը, աջարները և թուրք-մեսխեթցիները ձգտում էին հասնել տարածքային ինքնավարությանը: ՀԱԽ-ը աշխատում էր ձեռք բերել Վրաստանի հայազգի քաղաքացիների համար արտերկրային ինքնակառավարում, որի գլխավոր բաղադրիչն էր մշակութային ինքնավարության մասին գաղափարը: Այն պետք է կարևոր դերակատարում ունենար Վրաստանի հայ համայնքի, այդ թվում նաև վրացախոս վիրահայերի, ազգային ինքնության պահպանման գործում: Մշակութային ինքնավարության կարգավորման ուղիները փնտրում, քննարկում և առաջարկում էին հասարակայնության տարբեր շրջանակները: Հայ համայնքում գործող տեսակետների մասին պատկերացում կազմելու համար բավական է դիմել ժամանակի մամուլին: «Երբ մենք ասում ենք կուլտուրական ավտոնոմիա,– կարդում ենք դաշնակցական պարբերականում, – հասկանում ենք մի այնպիսի դրություն, որ ամեն մի ազգ իրավունք պիտի ունենա պետության հաշվով կառուցելու և պահպանելու իր ազգային կուլտուրական կյանքը: Օրինակ՝ հայերը Վրաստանում (կամ՝ աբխազները, թուրքերը, ռուսները, հույները և այլն) պիտի ունենան իրենց ընտրովի*

---

[90] *Այս մասին մանրամասն տե՛ս Բ. Վ. Մ ա ի լ յ ա ն. Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ. – ՊԲՀ, 2006, -1, էջ 181-199, նաև՝ ն ո ւ յ ն ի* Вопросы армянской школы в Демократической Республике Грузии.– Вестник Российско-Армянского университета (гуманитарные и общественные науки), 2010, № 1, с. 22–32.

[91] *Վրաստանի ՆԳՆ-ի 1918 թ. հուլիսի 20-ին արձակած «ազգայնացման մասին կանոնադրության» հիման վրա աշխատանքից ազատվեցին ոչ միայն վարչական մարմիններում ծառայող և վրացերենին չտիրապետող պաշտոնյաները, այլև պետական ենթակայության տակ գտնվող բոլոր հիմնարկներում աշխատող շատ ու շատ բժիշկներ, ուսուցիչներ, բանվորներ, փոստ-հեռագրական ծառայողներ: Այսպիսով՝ ամենատարածված և հուսալի աշխատանքը՝ պետական ծառայությունը, գործնականում հայ, ռուս և այլազգի մտավորականության, առհասարակ կրթված ոչ վրաց զանգվածի համար մնում էր անհասանելի, քանի որ բոլոր պաշտոնները վերապահվում էին վրացիներին: Խտրականության այս արատավոր պրակտիկան հեգնանքի արժանացավ մամուլի էջերում, որտեղ կարդում ենք. «Երբ այդ անում էին ցարական ռեժիմի սպասավորները, այդ որակվում էր որպես «ռուսիֆիկացիա», իսկ երբ այդ անում են իրենք՝ կոչում են «նացիոնալիզացիա» (տե՛ս Լեզվի խնդիրը. – «Նոր Հորիզոն», 29. XI. 1918):*

մարմինը, ասենք Ազգային Խորհուրդ: Պետությունը հարկ է հավաքում անխտիր բոլոր քաղաքացիներից և այդ դրամով պահում զանազան հաստատություններ: Պետության պարտքն է՝ կրթական-կուլտուրական նպատակների համար հատկացված ամբողջ գումարը համեմատական չափով բաժանել – նայած ամեն մի ազգի թիվն – ազգությունների ընտրովի մարմինների մեջ, որոնք և պիտի պահեն կուլտուրական հաստատությունները (դպրոց, թատրոն, գրականություն և այլն): Ապա, նույն ազգային մարմիններին միայն պիտի վերապահվի այդ կրթական-կուլտուրական հաստատությունների ղեկավարությունը, ոգի և ուղղություն, բովանդակություն տալը»[92]:

ՀԱԽ-ը ի սկզբանե, այն թյուր համոզմունքն ուներ, թե նորաստեղծ հանրապետության ղեկավարները հետևողական կլինեն ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարության հարցում և ՎԴՀ-ում կիրականացնեն այն նույն կերպով և ծավալով, ինչպես դա իրենք նախկինում էին պահանջում Ռուսաստանի ցարական իշխանություններից Կովկասի ողջ ժողովուրդների համար:

Մեփական պետականություն հռչակելով՝ վրաց առաջնորդներն այլ ազգություններին փարթամ խոստումներ էին բաժանում նորաթուխ հանրապետության կազմում նրանց լուսավոր և բարգավաճ հեռանկարների մասին: Ըստ ՎԴՀ-ի ղեկավար անձանց տարածում ստացած տեսակետի, սակայն, քաղաքացիների ազգային կարիքները պիտի յուրացվեին տեղական ինքնակառավարման մակարդակով, քանի որ երկրում հռչակված «դեմոկրատական» կարգերը երաշխիք են ստեղծում որևէ հալածանքի դեմ: Ինքնավարության սկզբունքի փոխարեն, այդ թվում նաև մշակութային, ազգային փոքրամասնություններին առաջարկվեց բավարարվել միայն լայն ժողովրդավարացման մասին կարգախոսով: Մշակութային ինքնավարության մասին տարբեր տեսակի գաղափարներին, հետևաբար, վրացական քարոզչական մեքենան «թաքնված անջատողականության» պիտակ էր կպցրել: Այնուամենայնիվ, քաղաքակիրթ աշխարհի աչքերին թոզ փչելով, ժամանակի վրաց առաջնորդները մշտապես ընդգծում էին հայրենի պետությունում բնակվող այլ ազգությունների իրավունքները հարգելու իրենց «ջերմ» պատրաստակամությունը[93]:

Որոշելով ընդմիշտ զրկել ոչ վրաց ազգություններին իրական մշակութային ինքնավարությունից, խորհրդարանի ճնշող վրաց մեծամասնությունը կազմել էր այնպիսի հանրապետական սահմանադրություն, որ այն ազգային փոքրամասնությունների իրավունքների մասով չէր էլ կարող

---

[92] *Տե՛ս Լեզվի խնդիրը. – «Նոր Հորիզոն», 29. XI. 1918:*

[93] *1920 թ. սեպտեմբերին Թիֆլիս ժամանեց 2-րդ Ինտերնացիոնալի կարկառուն դեմքերի պատվիրակությունը, որի հետ «ռսկյա գեղմի երկրում»՝ Վրաստանի անկախության «de jure» կարգավիճակի ճանաչման խնդիրը ժամ առաջ լուծելու լուրջ հույսեր էին կապում: Եվրոպացի բարձրաստիճան հյուրերն այցելեցին նաև ՀԱԽ, որի ղեկավարները ջերմորեն ողջունեցին նրանց մուտքը: Այն տոնական մթնոլորտը, որը ջանասիրությամբ ստեղծվել էր թանկագին «զբոսաշրջիկների» համար, նրանց մազաչափ մտածելու տեղիք չէր տալիս, թե Վրաստանում գոյություն ունի, օրինակ, ազգային խտրականություն: Այսպիսով, ՀԱԽ-ը և նույն բովանդակություն ունեցող կառույցները, սույն պահին արդեն լիովին արդարացրեցին իրենց գոյության փաստը՝ վրաց առաջնորդների քաղաքական հաշվարկների համատեքստում (տե՛ս «Բանվորի ձայն», 29. IX. 1920):*

արդարացնել ու լիովին բավարարել վիրահայ, ջավախահայ, ինչպես նաև աբխազահայ համայնքների սպասելիքներից և ոչ մեկը[94]:

Վրաստանի ՀԱԽ-ը գոյատևեց մինչև 1921 թ. փետրվարի 28-ը, երբ ազգային այլ կազմակերպությունների հետ խորհրդային իշխանությունների կողմից կասեցվեց նաև նրա գործունեությունը:

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОВЕТА ГРУЗИИ (Август 1918 г. – февраль 1921 г.)

БЕНИАМИН МАИЛЯН

Р е з ю м е

В период существования Демократической Республики Грузии в Тифлисе функционировал Армянский национальный совет (Армнацсовет). Он был сформирован на паритетных началах по взаимному согласию АРФ «Дашнакцутюн», Армянской народной партии, а также ряда авторитетных армянских деятелей из числа социал-демократов и социалистов-революционеров. Этот орган был причастен ко всем важным событиям, которые произошли в означенный период в жизни армян Грузии. Систематизированное изложение истории Армнацсовета не только позволяет выявить ряд существенных фактов и явлений, относящихся к армянской диаспоре в Грузии, но и выстроить особую исследовательскую канву, существенно важную с точки зрения понимания и изучения отдельных проблем историографии этой страны. Армнацсовет был задуман как руководящий орган экстерриториального национального самоуправления армян Грузии, который должен был осуществлять посреднические функции между государством и гражданами армянской национальности. Другой его основной задачей было претворение в повседневной жизни основных принципов культурной автономии армянской диаспоры. Повсеместная грузинизация органов власти и номинальное представительство национальных меньшинств в законодательных учреждениях «демократической республики», не могло обеспечить их полноправного положения наравне с титульным этносом. В этих непростых условиях Армнацсовет оставался единственным представительным органом 400-тысячной армянской диаспоры Грузии. Грузинские власти решительно не признавали эту роль Армнацсовета и настаивали, чтобы он был лишь исключительно культурно-просветительным учреждением.

---

[94] *Վրաստանի հայ համայնքի ենթադրվող մշակութային ինքնավարության բազմակուտակ խնդիրների և մարտահրավերների մասին մանրամասն տե՛ս Բ. Վ. Մ ա ի լ յ ա ն. Հայոց մշակութային ինքնավարության ծրագիրը Վրաստանի Հանրապետությունում 1920 թվականին. – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVI. Երևան, 2007, էջ 173-179:*

FROM THE HISTORY OF ACTIVITIES OF ARMENIAN NATIONAL COUNCIL OF GEORGIA (August 1918 – February 1921)

BENIAMIN MAILYAN

S u m m a r y

In the period of existence of Democratic Republic of Georgia in Tiflis functioned Armenian National Council (ANC). It was formed on parity basis by mutual agreement of ARF “Dashnaktsutiun”, the Armenian People's Party, as well as a number of authoritative Armenian leaders from among the Social Democrats and Socialist Revolutionaries. This organ was involved in all the important events that occurred in the given period in the life of the Armenians of Georgia. Systematized exposition of the history of ANC does not only allow to reveal a number of significant facts and events relating to the Armenian Diaspora in Georgia, but also to build a special research outline, essential from the standpoint of understanding and study of individual problems of historiography of this country. ANC was conceived as the governing body of extraterritorial national self of Armenians in Georgia, which was supposed to mediate between the state and citizens of Armenian nationality. Its other main task was implementation of the daily life of the basic principles of cultural autonomy of the Armenian Diaspora. Widespread Georgianization of authorities and nominal representation of ethnic minorities in the legislative institutions of the “democratic republic” could not provide their full status on a par with the titular ethnic group. In these difficult conditions ANC was the only representative body of 400 thousand Armenian Diaspora in Georgia. Georgian authorities have resolutely refused to recognize this role and insisted it to be exclusively a cultural-educational institution.